

ՏԱՃԱՐ

ՓՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԵՄԲԱԴԻՐ
ՉԱԲՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 4 ՄԵՊԵՏԵՐԻ ԴՅԱՆ

ԹԻԻ 34

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- | | |
|--|---------------------|
| ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ. — Տրտ ունեւորներ | ԳԻԳՈՐԻՍ |
| ԿԱՐՊԵՒԿՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ, ԱՌԱՋԻՐԱՅ ԸՆԹՐՈՒԹԵԱՆ | ԱՐԵԱԿ Ա. ԱԼՊՅԱՃԵԱՆ |
| ԱՌԱՋԻՐ (Գ.) | Գ. ԳԱՊԵՆՃԵԱՆ |
| ԱՌԱՋԻՐԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ. Ս. ԵՓՐԵՄ (Գ.) | ՅՐ. ՔԶ. ՆՍԱՅԵԱՆ |
| ԿԻՒԽԻՈՅ ՄԷՋ. — Հոգեւոր եւ բարոյակաւ տագնա- | ՅՈՎՀ. ՔԶ. ԿԷՎԶԵՐԵԱՆ |
| պալի վիճակ | ԳՐԻԳՈՐԻՍ |
| Հայ քահանայութիւնը | ԽԱԶԻՍԱՐ |
| ԹԵԼԱԴՐԻՋ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ. — Լմնցած շէնքը | |
| ՄՏԱԾՈՒՄՆԵՐ ՄԵՆ ՄԻՏՔԵՐՈՒ. — Երիտասար- | ԼԷՈՆ ԹՈՂՍԹՈՅ |
| դուծիւն | |
| ՅՈՒՂԻՈՍ ԵՒ ՊԱՄՓԻԼԻՈՍ. — Առաջին Քրիստոնեա- | |
| նեքու ժամանակուան պատմութիւն (Շար.) | |
| ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբաթուան կարեւոր լուրեր | |

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է
դիմել առ Զարմայր Քահանայ Կեղիւբեան, Կ. Պոլիս, Պեթիկթաշ, Հայոց եկեղեցի:

بشمکطاش ارومى کلیسایسنده «داجار» غزتهسى مدیرى پاپاس زارماير افندی
Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրու
Արսասահմանի համար	» 10 ֆրանկ
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օսլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ դոնողը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻՐԱՄԱՏՉԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. փոխա-
նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Գա-
րիկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆթանեան

ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Բհնյ. Պօղար-
եան

ԱՅԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեան

ԲԱՐԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.

ԴԱՂԱՏԻՍ. — Առաջնորդ Տ Բարդէն Եպս.
Կիւլէսէրեան

ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան

ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Եպիսկ.
Դիմաքսեան

ԵՐԶՆԿԱ. — Տ. Մեսրոպ Բհնյ. Թորոսեան

ԶՄԻՒՆԻՍ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան

ԷՍԿԻ ՇԷՀԻՐ. — Տ. Դալուստ քհնյ. Տ.
Դալուստեան

ԿԱՐԻՆ. — Առաջն. փոխանորդ Տ. Ներսէս
Ա. քհնյ. Վահանեան

ԿԻՐԱՍՈՆ. — Սրապիոն քհնյ. Այլաեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժա-
պետեան

ՄԱՐԶՈՒՍՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան

Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան

ՈՒՇԱՔ. — Յարութիւն քհնյ. Աստարսդեան

ՊԱՆՏՐՄԱ. — ՊԱՆԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մաղլումեան

ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ա.
Եպիսկ. Կէօմրիւքեան

ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան

ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ. Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Ասլանեան

ՍԵՐԱՍՏԻԱ. — Առաջն. փոխանորդ Տ.
Թէփիլէ Բհնյ. Օտապաշեան.

ՍԵԼԱՆԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Բհնյ. Տրէզ-
եան

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան

ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վոսմա-
պուհ Բհնյ. Բիպարեան

ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.

ՖՐԷԶՆՕ. — Յակոբ էֆ. Նչկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 4 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1911

ԹԻԻ 34

ՀՈԳՆԻՈՐ ԿԵՍԵՐ

ՏՐՏԱՌԹԻՒՆՆԵՐԸ

«Բանգի տրամուծիւնը որ ըստ Աստուծոյ է՝ կը գործէ փրկութեան համար ապաշխարութիւն որ չէ զղջանալի. բայց աշխարհի արքունութիւնը մահ կը գործէ: Բ. Կորն. Է. 10: (Վաղուան հաշու. գիրքէն):

Պօղոս առաքեալ Կորնթացիներու գրած իր առաջին թուղթով, «Առհասարակ կը լսուի թէ պոռնկութիւն կայ ձեր մէջ» գրելով՝ սաստիկ կերպով հարուածած էր անոնց մէջ գտնուած պղծութիւնները, եւ իրեն ճարտար վիրաբոյժ՝ թարախին բոյն դրած տեղը մկած էր իր նշգրահելու Դատապարտած էր անոնց կուռքերու զոհուած միս ուտելը՝ իրեն զայն կոչելով ինքն տկար եղբայրներու: Տրամեցուցած, ցաւցոյցած էր զանոնք, ու յետոյ իր անձին օրինակը տալով ըսած էր. «Նմանող ինձ եղէք, ինչպէս եւ ես Բրիտանոսի»: Պահ մըն ալ հոգեւոր պարգեւներու դարձնելով անոնց ուշադրութիւնը, մասնաւորապէս պանծացուցած էր Սէրը, գրելով Ա. Կորն. ԺԳ. Գոհար գլուխը, որ սիրոյ հիանալի

վերաւորութիւնն է: Եւ ահա իր այս երկրորդ թուղթով կը գրէ թէ՛ չէ զղջացած որ զանոնք արամեցուցած է, թէ ուրախ է որ անոնք առժամանակեայ կերպով արքունեցան այն թուղթէն, որովհետեւ ապաշխարութեան համար արքունեցան:

Ա. Տրամուծիւնները.—Ասոնք մեր կեանքի անբաժան ընկերներն են: Կեանքի այս ճամբորդութեան մէջ քալողներէն չկայ մէկը, որուն ճամբան երբեմն ալ տրամութիւններու մոլթ ձորերէն անցած չըլլայ: Կեանքի երջանկութեան ու խնդութեան լոյսերուն քով ստուերներ են ասոնք, որ ալ աւելի կը ցայտեցնեն անոնց յարգն ու փառքը: Մանաւանդ անցեալ ուրախութիւններ ախրանուշ յիշատակներով թեւ կ'առնեն մեր հոգիներուն մէջ, երբ արքունութեան տակեր կուգան մթաքնել մեր երկինքը: Եւ արդէն գիտենք թէ մեր տըլսութիւնները երկու տեսակ են. անոնք որ մեր կամքէն անկախ պատճառներով կուգան մեզի, եւ անոնք որ մեր իսկ միջոցով կը հասնին մեր վրայ: Կան վիշտեր ու արամութիւններ որոնցմէ շէնք կրնար խոյս տալ, հարկատու ենք անոնց. պիտի խմենք այն բաժակները որչափ ալ դառն ըլլան: Մեր Տէրն ալ խմեց անոնցմէ: Կան

տրամութիւններ, զորս մեր բարեկամները կը բերեն մեր վրայ յաճախ ուղղութեան եւ զգաստութեան հրաւիրելով մեզ, ինչպէս Պօղոս առաքեալինը՝ Կորնթացիներուն։ Ասոնք օգտակար բայց լեզի զեղեր են։ Իսկ կան տրամութիւններ ալ որոնց մէջք ենք պատճառ. մեր անզգուշութիւնները, մոռումները, մեր չար բաղձանքները, վերջապէս մեր այն ամէն բաները, որոնք կը մթաղեն ուրախութեան պայծառ շողերը մեր հոգիներուն։ Բայց աւելի յարմար է որ նկատողութեան առնենք Առաքեալին հակադրած երկու տեսակ տրամութիւնները, որոնք հակառակ արդիւնք կստանան։

Բ. Տրամութիւնը որ ըստ Աստուծոյ է. Ահա այս է որ կը յանձնարարուի Առաքեալին կողմէ. որովհետեւ փրկութեան համար ապաշխարութիւն գործող տրամութիւնն է այս։ Այս տրամութեան կրակն է որ զտուած ոսկիի պէս կը փայլեցնէ մեր նկարագիրը, որ մեր բնական ու անասնական մարդու քարի կոշտ կտորէն հիստքանչ արձանը կը կանգնեցնէ գլխի կըրծող խոցերով։ Մեր սիրտերուն այրող բուրվառն անուշ հոգութեան խնկումներ կը վերացնէ դէպի պատուանդանը երկնաւոր Հօր պահին։ Այս տրամութիւնով տրամեցան սուրբերը անցեալ դարերու մէջ. այս տրամութիւնով կը արամին նաեւ հաստացեալ հոգիները մեր օրերուն։ Այս տրամութիւնը կեանք կը բերէ։ Որդեաւոր ծնողք մը՝ որ իր գաւազն կը արամեցնէ, ուսուցիչ մը՝ որ իր աշակերտը կը տրամեցնէ, անկեղծ մտերիմ մը՝ որ իր բարեկամը կը արամեցնէ, ասոնք ուրիշ նպատակ մը չունին, բայց միայն Աստուծոյ ուղածին պէս տրամութիւն յառաջ բերել իրենց խնամքին յանձնուած հոգիներու մէջ, բարեկարգելու, կրթելու ազնուացնելու համար զանոնք։ Նախնի յանդիմանութիւնէն շանթահար սաղմոսերգուն ալ տրամեցաւ ըստ Աստուծոյ տրամութիւնով, ու իր սիրտին ալքերէն բղխեցաւ «Ողորմեա ինձ Աստուած», ապաշխարութեան հոգեցունց սաղմոսը։ «Անպատի մէջ կանչողի ձայն»ն ալ իր «ծնունդք իմից»ի ստեղծութիւնով ուրիշ տրամութիւն մը պատճառել չէր ուղեր, եթէ ոչ այն որ ըստ Աստուծոյ է ու ապաշխարութեան պտուղ կը բերէ։ Հետեւաբար Առաքեալը իրաւամբ կ'ուղէր անոնք այս տրամութիւնը Կորնթացիներու, որ ազատ ու անմաքուր կեանքի ճախնուալն վերանային լեռնապագաթնիւր Հաւաքի, Յոյսի եւ Սիրոյ։

Գ. Աշխարհի տրամութիւնը. Ահա այս է այն մեղսակար տրամութիւնը որմէ Առաքեալը կը զգուշացնէ մեզ, որովհետեւ աշխարհի տրամութիւնը մահ կը գործէ։ Ոչ ոք կրնայ այնչափ հասկնալ այս տրամութիւնը, որչափ այն որ յուսահատութեան ու սրտաբեկումի անեղանելի անդունդը զլորած է։ Եւ մեղք որ այնչափ շատ կան այս կեանքերէն։ Ո՛րչափ սոսկալի է այն յուսահատութիւնը որ կը հաւատայ թէ ա՛լ փրկութեան ամէն դուռ գոցուած է իրեն համար, թէ ա՛լ իսպառ կորսուած է ինք, թէ ալ բարիք սերմ մը իսկ չի կրնար ծիլ իր ճամբու պէս կարծրացած սիրտին վրայ։ Այդ արտաքին խաւարն է աշխարհի վրայ, դժոխք կեանքը, ապրող արհաւիրքը։ Չարը այս ախուր համոզումին օձագալար կապելով կը կապէ յաճախ շատ հոգիները երկրի վրայ ու յաւիտեանապէս կը դերէ զանոնք։ Պէտք է հոռու փախչիլ աշխարհի տրամութիւնէն, Հաւաքի, Յոյսի եւ Սիրոյ եռանիւն հաստատութեան վրայ պէտք է շինել մեր կեանքի շէնքը։ Հաւատացեալը մահուան համար ոտնդնուած չէ. մահը նինջ մըն է միայն, հետեւաբար մեռնի իսկ, աշխարհի տրամութիւնով չի մեռնիր։

Ո՛վ անմահ հոգիներ, չըլլայ որ տըրամիք աշխարհի տրամութիւնով. ձեր տըրամութիւնը ըստ Աստուծոյ պէտք է ըլլայ, որով պիտի լուացուիք ու մաքրուիք ձեր ապաշխարութեան արցունքներուն մէջ։ Աստուծոյ ուղածին պէս տրամեցէք որ Աստուծոյ ուրախութիւնը վայելէք։ Դուք քանի որ աշխարհէն չէք՝ անոր տրամութիւնն ալ մի ունենաք։ Երանի՜ անոր որ ապաշխարութեան արցունքներուն մէջ կընայ երգել, «Եկէք, ցնծութիւն ընենք Տիրոջը առջեւ»։

ԳՐԻԳՈՐԻՍ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(ԱՌԱՋԻԿԱՅ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ)

Գ. (*)

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իբր հոգեւոր եւ ազգային պետ Ռուսիոյ Հայոց, ունի երկու տեսակ իրաւասութիւն, աշխարհիկ եւ հոգեւոր: Աշխարհիկը կուտայ իրեն պատրիարքական հանգամանք, եւ ալիք դիւրեւ է որ այսօր աւելի շահագրգռական է կաթողիկոսին դիւրեւ:

Իբր պատրիարք-ազգայնէ՛ կաթողիկոսական իշխանութեան կապուած են պաշտօնէն իւր կարգադրութեամբ:

Ա. Հայոց վարժարանները:

Բ. Եկեղեցական եւ վանական կառուածները:

Գ. Հայ քաղաքացիներու տմուտնական դասերու քննութիւնը:

Այս երեք զլիւսաւոր հիմնական կէտերը կը կազմեն հազգային դոյութեան երեք սիւները: Այս իրաւասութիւնները առնել էջմիածնայ կաթողիկոսէն, Ռուսահայոց դոյութեան սպանաւ պիտի նշանակէր:

Ռուս կառավարութիւնը այս երեք շատ կենսական խնդիրներու մասին ալ իր պետական որոշ հայեցողութիւնները ունի, եւ իր ծրագիրները կազմած է սկսեալ 1828էն, այսինքն Հայաստանի ռուսական մասին զբաւուռնէ:

Ռուս կառավարութեան որոշ ծրագիրն եղած է սահմանափակել կաթողիկոսին իրաւասութիւնները, եւ զայն ստորաբաժանել, իր նուաճողական ուժը աւելցնելու համար: Եւ ասոր համար է որ պաշտօնէն իւր կազմութիւնէն առաջ ռուս պետական պաշտօնատարը կաթողիկոսին իրաւասութիւնները կրճատած են խորհրդական ժողովով մը՝ Սինոդով, եւ կաթողիկոսին ներկայացուցիչ-փոխանորդ Առաջնորդներուն քով դրած են կոնսիստորիաները:

Ասով հանգերձ դարձեալ կաթողիկոս

սին վրայ մնացած են բաւական ընդարձակ իրաւասութիւններ, որոնց իրական կիրառութիւնը Ռուսիոյ Հայոց համար կենսական է:

Այսպէս, կաթողիկոսական աշխարհիկ իշխանութեան երեք զլիւսաւոր կէտերը համառօտ քննութեան մը ենթարկելով, պիտի տեսնենք թէ անոնք ամէնքն ալ անցած են զանազան շրջաններէ:

Հայ վարժարանները. — Ռուս կառավարութիւնը Կովկասի տիրելէն անմիջապէս ետքը ուշադրութիւնը դարձուցած է իր նոր տիրապետած գաւառներուն այլազան ցեղերուն քաղաքակրթական նուաճման:

Կովկասի ազգերուն իրենց հովանաւորութեան ու հոկոգութեան սակ իրենց հազգային դպրոցներ ունենալը պետութեան համար վնասակար համարելով, կառավարութիւնը ընդհանուր կարգադրութեամբ մը փակեց հազգային բոլոր վարժարանները: Այս հիման վրայ 1834ին, Պաշտօնէն իւր կազմութիւնէն առաջ, փակուեցան 108 Հայ եւ Հայ-կաթողիկ, 24 Վրացի, 459 Թուրք եւ 4 Հրեայ վարժարաններ: Այդ դպրոցներուն մէջ կ'ուսանէին 5622 աշակերտներ՝ 642 ուսուցիչներու ձեռքով: Հայոց դպրոցներուն թիւն էր 120, իսկ աշակերտներուն՝ 1767: Այս փակուած 595 դպրոցներուն փոխարէն, Կովկասի իշխանութիւնները մեծ ջոկատութեամբ հազիւ կրցան Կովկասի մէջ բանալ 11 վարժարան, ինչ որ շատ անբաւական էր Կովկասի այլազան ազգաբնակչութիւնները դաստիարակելու կառավարութիւնը այս կարգադրութեամբ որոշապէս հիմը կը դնէր կրթութեան սկստականացման, եւ միայն հոգեւոր վարժարաններու դոյութիւնը ներքի կը համարէր, այն ալ խիստ սահմանափակումներով, ինչ որ Պ. Սինոդին առ Յովհաննէս Կարբեցի կաթողիկոս ուղղած 1834 թուականով հրահանգէն կը հասկցուի: Պ. Սինոդէն Կարբեցիին կ'ազդարարէր արդիւնէ հայ կղերը զբաղելէ հայ մանուկներու դաստիարակութեամբ՝ առանց կառավարութիւնէն նախապէս թոյլտուութիւն ստանալու: Կովկասի կուսակալը նոյնպէս

(*) Բ. յօդուածը սէս Թիւ 31:

մատնանիչ կ'ընէր Ախալցխայի մէջ Կարապետ եպսկփ բացած հոգեւոր դպրոցը, ուր կ'ընդունուէին նաեւ աշխարհականներու զաւակներ : Կուսակալը խստիւ կ'արգիւէր հոգեւոր դպրոցներու մէջ աշխարհականաց ընդունուիլը, եւ ընդունուածներուն ալ արձակուիլը կը խնդրէր : Պ. Ռօզէն իր այս ոսնձգութիւնը տարածեց նաեւ Ներսէսեան վարժարանի վրայ : Կաթողիկոսը եւ Թիֆլիսի առաջնորդը լաւագոյն համարեցին դպրոցը փրկել, զայն հոգեւոր սեւեռներէն հռչակելով եւ կառավարութեան մատակարարութեան յանձնելու տխուր հարկէն ազատելով Կուսակալ Պ. Ռօզէն, յետոյ պահանջեց եկեղեցական ու դպրոցական մատակարարութեանց հաշիւները, որոնք երբեք չտրուեցան՝ Կաթողիկոսին յամատութեամբը Սակայն, ինչպէս առաջին քայլերէն կ'երեւայ որոշուած էր կառավարութեան ծրագիրը, որ դէպի որոշեալ նպատակէն ուղղուեցաւ անխտոր կերպով մը 1834էն սկսեալ մինչեւ մեր օրերը, զի Ռուս կառավարութեան հայեացքները միշտ հաստատուն են եւ անխախտ :

1836ին Պ. Ռօզէնի այս նախաքայլերուն վրայ հիմնուած են պաշտօնէիսայի հայ վարժարաններու նկատմամբ սահմանուած հինգ յօդուածները, (112-116 յօդ.) որոնք հոգեւոր հանգամանօք կը ներկայացուին, Էջմիածնայ եւ իւրաքանչիւր Վիճակի մէջ մէկ մէկ հատ ըլլալու կ'արտօնուին, ուղղակի առաջնորդներուն հրահրութեանը եւ Սինօդին վերադասութեանը կ'ենթարկուին, Ռուս լեզուին եւ պատմութեան պարտաւորիչ հանգամանքը կ'որոշուի եւայլն :

Սակայն այս որոշ ծրագիրը անմիջապէս չի գործադրուիր, եւ Հայերը մինչեւ 1884 կը պահեն իրենց վարժարանները, կառավարական թոյլ հսկողութեան մը տակ, Ռուս կառավարութիւնը այդ չըջանին մէջ քանիցս անգամ իր միջամտութիւնը ի զործ գնել փորձած է, սակայն Կաթողիկոսները բռն կերպով ընդդիմացած են :

Մասնաւորապէս Գէորգ Դ., իր յամառ

ընդդիմադրութիւններովը յաջողեցաւ 1874 ին ուս կառավարութիւնէն ստանալ հայ վարժարաններու նոր կանոնադրութիւն մը, որ շատ մը ազատութիւններ կուտար, մասնաւորապէս ընդունելով աշխարհական հոգաբարձութեանց կազմութիւնը :

Գէորգ Դ-ի մահէն յետոյ ուս կառավարութիւնը փակեց բոլոր հայ վարժարանները, հիմնուելով Պաշտօնէիսայի վրայ, որուն տառական գործադրութիւնը կ'արածէր միայն վեց հոգեւոր վարժարաններու գոյութիւնը բովանդակ Ռուս սատանի մէջ : Մակար Կաթողիկոս մեղմայնելու յաջողեցաւ այս խիստ կարգադրութիւնը, ստանալով երկպասեայ նախնական վարժարաններու բացման արտօնութիւն, յարակից եկեղեցեացի Այս կարգադրութիւնը սակայն առժամայէն էր, եւ ուս կառավարութիւնը իր ծրագիրը լքած չէր, միայն թէ քայլ մը եւս առաջացած էր եւ անշուշտ պիտի դիմէր դարձեալ իր որոշած նպատակին, ուրիշ յարմար առիթի մը սպասելով : Այդ առիթը դաւած ըլլալ կարծեց Կաթողիկոս խորհմանի օրով, հրամայելով փակումը բոլոր հայ վարժարաններուն : 1905ի յեղափոխութիւնէն եւ կալուածներու վերադարձէն յետոյ միայն ուս կառավարութիւնը հռչակելով խղճի ազատութիւն, յեղափոխական հասանքին առջեւ ակարացած, ազգերու ուսացման ծրագիրը պահ մը մոռցաւ, եւ հոգատակ ժողովուրդներուն հին իրաւունքներուն վերահաստատութիւնը թոյլատրեց Այս հիման վրայ Հայերը բացին իրենց ծխական եւ հոգեւոր դպրոցները եւ անոնց թիւը քաղմացութիւն հետզհետէ : Կովկասեան իշխանութիւնը այս վարժարաններու վարչութեան համար գործադրութեան զբաւ առժամապէս 1874ի կանոնները մինչեւ նորին կազմութիւնը, խորհմանի կաթողիկոսութեան վերջերը կազմուեցաւ յանձնաժողով մը խառն կառավարութեան եւ Կաթողիկոսին ներկայացուցչներէն, եւ անոնք կազմեցին ծրագիր մը որ աւրոգ յետաշրջական արամադրութեանց առկ կը կրէր գրոշմը հին կառավարութեան հայեացքներուն Կաթողիկոսին ներկայա-

ցուցիչները չստորագրեցին, մասնաւորապէս օգտուելով իրմեանի վերահաս մահէն, առարկելով թէ առանց կաթողիկոսին հաւանութեան, ազգովին ընդունուած չի կրնար համարուիլ խմբագրուած օրէնքը:

Իզմիրլեան կառավարական ծրագրին դէմ իր առարկութիւնները եւ հակառակարկները ներկայացուց իր պաշտօնի ձեռնարկելէն ամիջնապէս յետոյ, ձեռնհաս անձերու հետ խորհրդակցութիւններ կատարելէ ետքը:

Իր ծրագիրը պաշտպանելու եւ բերանացի կերպով ալ բացատրելու համար անձամբ ուղեւորեցաւ Թիֆլիս, եւ յաջողեցաւ Կովկասի փոխարքայ Պ. Վարանցով Տաշքովի հաւանութիւնն ստանալ:

Պ. Վարանցով Տաշքով երկուստեք համաձայնութեամբ ընդունուած այս ծրագիրը Բեզերսպուրկ յղած է, եւ հաւանական է որ հոն օրինական քննութեանց առարկայ ըլլալէ եւ Տումային վաւերացման ենթարկուելէ յետոյ գործադրելի օրէնք հռչակուի:

Ապագայ կաթողիկոսը, խնդիրը Իզմիրլեանի ոգևորը նկատելով շատ բան պիտի շահի, եւ կը կարծենք թէ լաւագոյն բանը ըրած պիտի ըլլայ, եթէ պահանջէ ու պնդէ որ այս ծրագիրը վաւերացուի եւ գործադրութեան դրուի:

ԱՐՇԱԿ Ա. ԱԼՊԹԱՃԵԱՆ

ՎԱՆԷՆ կը գրեն թէ Երամեան վարժարանը այս տարի 16 շրջանաւարտներ ընծայած է ազգին: Օգոստ. 14ին կատարուած կրթական գեղեցիկ հանդէսով մը, Կարգացուած տեղեկապրէն կը հասկցուի թէ դպրոցական վերջին (33րդ) շրջանը կը փակուի 150 ոսկի բացով մը: Ասիկայ չի վհատեցներ՝ սակայն՝ կրթական այդ անխոնջ եւ անվհատ մշակը, որ յոյսով լի եւ ազգայնոց օժանդակութեան վրայ վստահ, կը թեւակոխէ այս տարի 34րդ շրջանին մէջ:

ԱՍՈՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Ե Փ Ր Ե Մ

Դ. (1)

Ասորական Եկեղեցւոյ հոյակապ մատենագիրը ըլլալով, Եփրեմ երկու մասնակի կողմերով կը ներկայանայ մեզի. 1. Բանասէղծ, 2. Մեկնիչ: Կ'արժէ առանձին կերպով վերլուծել այս գեղեցիկ հանգամանքներուն երեսն բերած ճոխ ու բեղուն արտադրութիւնները:

Եփրեմ իբրեւ եկեղեցական բանաստեղծ, Բարդաճանէն վերջ, անհամեմատ կը մնայ Ասորի բանաստեղծներուն շարքին մէջ, որոնք իրենց երգերն ու տաղերը գրի առած են Եփրեմի հետեւողութեամբ, եւ Ասորական Եկեղեցւոյ այս օրուայ շարակնոյնն էջերը մեծ մասամբ Եփրեմի տաղերն են որ կը զարդարին: Ըստ Լամբի, այս բանաստեղծութիւնները երկու մասերու կը բաժնուին. 1. Ճառեր (mimré), 2. Նոգեր (madrascché)(2), ձառերը եօթնամանկեան տաղաչափութեամբ շարադրուած են. իսկ երգերը որ մեծ մասամբ ընդարձակ տուններէ կազմուած են, ունին վանկերու եւ յանգերու հաւասար թիւ մը, եւ որոնց մէջ արուեստի չափը (rythme) շատ վաշխուչ ու ներգաշնակ է: Յոյն, Ասորի, Նեստորական Եկեղեցիներու ծիսարանները, ժամագիրքերը եւ պաշտամունքի յատկացեալ գիրքերը լեցուն են Եփրեմի այս երգերով(3): Բայց այս հաւաքածոներուն մէջ ամենէն արժէքաւորն է կտակը որուն Եփրեմի գրչէն ելած ըլլալը կարգ մը քննադատներ խնդրական ներկայացնել ուղեցին, սակայն Տիւվալ կը հաստատէ թէ Եփրեմի հեղինակութիւնն է, որուն ոյժ կուտայ նորագոյն հեղինակ մը՝ Սալօմօն

(1) Շարունակութիւն 29րդ Թիւէն:

(2) Sbe, S. Ephraemi hymni et sermones էջ 8

(3) Թերեւս Հայ Եկեղեցւոյ շարականսոս ասորագէտ հայրերն ալ հետեւած ըլլան Եփրեմի: Բնագրական բաղդատութիւն մը կրնայ ստուգել այս կարծիքը,

ալ Պասսորա, միայն Յովսէփի վրայ զընուած բանաստեղծութիւնը Եփրեմի վերագրելով (տես The book of the bee էջ 15. 47) որուն եօթնավանկեան չափը եւ միութիւլ ոճը կը հաստատեն այս կարծիքը, թէ պէտ եւ արժէքաւոր զրչագիր մը անոր հեղինակութիւնը Մար Պալայի կը վերագրէ(1)։ Այս կտակը որ կը բովանդակէ տասներկու երգեր, հրատարակուած է Մ. Պէժմանի կողմէ լիակատար երկրորդ հրատարակութիւնով որուն առաջին հրատարակութիւնը՝ երեւցած 1887ին՝ կը պարուգահէր միայն առաջին տասը երգերը։ Մ. Լամի առաջին հրատարակութիւնէն արտատպած է բնագիրը եւ Լատիներէն թարգմանութեամբ մը իր գործին երկրորդ հատորին մէջ հրատարակած է «S. Ephraemi hymni et sèrmōnes» խորագրով։ Այս երգերուն բնագիրը Արեւելքէն եկած գրչագիրներուն մէջէն գտնուած է, Մ. Պէժման բախտաւոր եղած է նախ առաջին տասը երգերը գտնելու եւ ապա վերջին երկուքը, որոնց առաջինը Յակոբ Մծբնացիի նշխարներուն Կոստանդնուպոլիս փոխադրութեան օտթիւ գրի առնուած է։ Սալօմոն ալ Պասսորա երկրորդ կողմէ մ'ալ կը յիշէ որ Մծբնացւոյ նշխարներուն վրայ գրուած է(2)։

Դալով ճաներուն եւ մեկնողական գործերուն, ասոնք բաւական ճոխ եւ ընդարձակ կ'ալուած մ'ունին ուրիշ լեզուներէ աւելի մեր Ոսկեդարու հայերէնին մէջ, որովհետեւ ասոնցմէ շատին Ասորերէն եւ Յունարէն ընդգրկելու կ'որոշուած ըլլալով, միայն հայերէն թարգմանութիւնը կը մնայ «Եփրեմի մահէն քիչ տարի ետքը, կ'ըսէ Հ. Գ. Զարգհանէլեան, մեր գրականութեան ոսկեղէն դարուն մէջ եղած են այս թարգմանութիւնները Ասորի բնագրէն, ինչպէս հաւանական կ'երեւայ, վասն զի թէպէտ Սրբոյն Եփրեմի գրածները մէկէն յունարէն թարգմանուեցան, բայց մեր նախնիք որ հաւասարապէս տեղեակ էին

Ասորի եւ Յոյն լեզուաց, լաւ համարեցան բուն Ասորի սկզբնագրին վրայէն թարգմանել, ինչպէս յայտնի կ'երեւնայ ոճէն եւ մանաւանդ յատուկ անուանց թարգմանութիւնէն» (1)։

Թէ ո՞վ եղած է ոսկեդարու թարգմանիչներէն Եփրեմի գործերուն բուն թարգմանիչը, կ'ըսէ բազմահմուտ Նորայր Բիւզանդացի «կը ցուիմ որ չգիտեմ զոք ի թարգմանչացն յականէ է Եփրեմեան գործոյն . . . յանուն Սրբոյն Եփրեմի խորին Ասորեոյն ի ձեռն այս կարգի աշակերտաց հանդերձ այլ քանի մը բնագրովք ի նմին լեզուէ»(2)։ Բայց քիչ յետոյ Նորայր կը կարծէ թէ երկրորդ դասու թարգմանչաց ձեռքով կատարուած ըլլայ Ս. Եփրեմի գործերուն հայերէն թարգմանութիւնը։ Սակայն մենք պիտի տեսնենք թէ իրողութիւնները այս կարծիքին հակառակ կ'ապացուցանեն, եւ Եփրեմի գործերուն հայերէն թարգմանութիւնը առաջին թարգմանչաց ձեռքով եղած է, որովհետեւ հայերէն գրերու գիւտին առթիւ Ս. Մեսրոպ երբ Եդեսիա այցելեց, այն տառնի Եղիսիոյ առաջնորդ Բէգուխտա կալիսկոպոսէն (398-409) խնդրեց որպէս զի իր աշակերտներէն երկուքը Պարսից Դպրոցը ընդունուելով Ասորերէն լեզուն սորվին։ Յետոյ երբ Մեսրոպ Դուգարաց աշխարհէն դարձաւ, առաջին թարգմանիչներէն Եղիկ Կողբացիի հետ Եդեսիա զրկեց Յովսէփ Պաղնացիին, «զի որ միանգամ գտցի անդ գիրք տասցեալ հարցն առաջնոց, թարգմանեալ ի մեր լեզուս բերցեն փութով(3)»։ Օրուան առաջնորդը՝ Ռապուէլոս Կալիսկոպոս (412-435) որ Հայոց հետ աւելի սերտ յարաբերութեան մէջ կը գտնուէր, սիրալիր ընդունելութիւն մ'ըրաւ մեր առաջին թարգմանչաց, որոնք երկու տարիի չափ Պարսից Դպրոցին մէջ Ասորերէն լեզուն սորվելէ յետոյ, Եփրեմի գործերէն մաս մ'ալ

(1) Տես Verbeckի S. Ephraemi opera ուր հրատարակուած են Ա եւ Բ երգերը, էջ 270։

(2) Այս երգերուն եւ ոչ մէկը հայերէնի թարգմանուած է։

(1) Հմմտ. «Պատմ. ընդհ. ազգ. մատենագր.», էջ 754-755։

(2) Հմմտ. «Արարիւն վարդ. եւ նորին թարգմ.», էջ 18։

(3) Հմմտ. Պատմ. հայկ. հին դպր. էջ 275։

Հայերէնի թարգմանեցին, եւ անկէջ ան-
ցան Բիւզանդիոն՝ իրենց ուսման ընթացքը
շարունակելու համար:

Եւ որովհետեւ Ոսկեդարու առաջին
թարգմանչաց խումբը հազիւ ժամանակ
ունեցած է Ս. Գրոց մասերը եւ կամ անոնց
վերաբերեալ մեկնողական հատուածները
հայայնել, մենք պիտի կրնանք Ս. Եփրե-
մի հայերէնի թարգմանուած ամբողջ գոր-
ծերը երկու որոշ մասերու բաժնել. 1.
Ոսկեդարու քարգմանութիւնի որոշ Եփ-
րեմի մեկնողական գործերը եղած են,
2. Արծաթի դարու քարգմանութիւնի, որ
ճառերն եւ աղօթքները եղած են:

Այս թարգմանութիւնները առանձին
կերպով վերլուծելէ առաջ, կ'արժէ մէջ
բերել անոնց ամբողջական մէկ ցանկը,
զոր Նորայր Բիւզանդացի իր «Կորիւն վրդ-
եւ նորին թարգմ.» անուն ուսումնասիրու-
թեան մէջ (հմմտ. էջ 18) խղճամբոյ հետա-
գոտութեամբ մը դասաւորած է. Կարելի է
զանոնք այդ երկու չըջանին վերածել սա
կարգով:

1. Ոսկեդարու քարգմանութիւնի.—

Ա. — Սրբոյն Եփրեմի մեկնութիւնք
Հին Կտակարանի, այսինքն Արարածոց,
Նիլից. Ղեւտացոց. Թուոց. Երկրորդ օրի-
նաց, Յեսուայ. Դատաւորաց, Սամուէլի
(Ա. եւ Բ. Թագաւորաց), Թագաւորաց (Գ.
եւ Դ. Թագաւորաց) Ա. եւ Բ. Մնացորդաց:
Բ. — Նորին Համարաբառ Աւետարա-
նաց:

Գ. — Նորին թարգմանութիւն Աւետա-
րանի:

Դ. — Նորին մեկնութիւնք չորեքտա-
սան թղթոցն Պաւղոսի, բաց ի թղթոյն առ
Փիլիմոն. չորեքտասաներորդն է Գ. Կո-
րնթականաց թուղթը:

2. Արծաթի դարու քարգմանութիւնի:

Ասոնց մէջ կարեւոր գործի մը թարգ-
մանութիւնը չերեւիր. միայն ոսկեդարու
թարգմանութիւններէն մէկ քանինը
սրբազրուած եւ կամ տարբեր բնագրէ
կրկին թարգմանուած են. մնացեալները
փոքր ճառեր են, թուով վեց՝ ըստ Նո-
րայրի. իսկ ըստ Զարբհանէլեանի բազմա-

թիւ են ճառերն ու ներբողները (1):

Ա. — Ապաշխարութիւն Նինուհացոցն.
«Ահա հրաման հասեալ առ մարգարէն Յով-
նան քարոզել Նինուէի» (տես Եփրեմի մա-
տենագր. հատ Դ. էջ 107-124). այս ճառը
գեղեցիկ նմոյշ մըն է Ասորական բանաս-
տեղծութեան, կ'ըսէ Նորայր, եւ կը թուի
ինձ թէ ոտանաւոր է բնագիրն: Բ. — Ի
յարութիւն փրկչին մերոյ (անդ էջ 61-62).
Նորայր իր յառաջաբանին մէջ (էջ ԻԴ) կը
սրբագրէ այս խորագիրը ըսելով. «Ի Յա-
րութիւն փրկչին մերոյ է մասն կցորդոց
նորին Եփրեմի» (2): Դ. — Ի յիշատակի
Մորոց Մարաբայեցոցն. «Արար Աստուած
գերկինս եւ գերկիր եւ զամենայն որ է ի
նոսա» (Անդ էջ 125-128): Դ. — Յորդո-
րումն պահոց. «Պահք յայտնիք ծածուկ
պահովք բովանդակին» (անդ էջ 179-183):
Ե. — Վասն ֆեոյ եւ արքնութեան. «Մի
տայք իշխանութիւն ընոյ թագաւորել
յանդամս ձեր» (անդ էջ 211-212): Զ. —
Վասն հսկողաց. «Ժուժեցայք փոքր մի ա-
ռաքնիք բառնալ զճանրոյթիւն խաւարի»
(անդ էջ 213-214):

Իսկ օրհնութիւններ ցուցակին մէջ
կը հանդիպինք հետեւեալ կանոնին. «Հո-
գեհանդիսսն եւ զԲահանայթաղն որ ունի
ութ եւ տասն Աւետարան, արարեալ է Սրբ-
բոյն Եփրեմի խորին Ասորոյ, եւ Ղազար
թարգմանիչ երբ ի Հայս յերեքտասան ամի
հայրապետութեան Սրբոյն Սահակայ Պար-
թեւի անն Աստուծոյ որ էր նախանձա-
խնդիր կարգաց Եկեղեցւոյ: Ասոնցմէ զատ
Ս. Եփրեմի ճառերուն մէջ կը յիշատակուի
նաեւ «Ծառ ի վկայսն արեւելից» (տպ.
Եփրեմ. Վինետ. 1836. հատ Դ. էջ 150).
«Այս ճառը ստութեամբ Եփրեմայ կ'ըն-
ծալուի, կ'ըսէ Հ. Յ. Տաշեան, բուն հեղե-
նակն է Մարութաս Ասորին որուն երկ-
մասնեայ զրութեան մէկ կտորն է» (3):

(1) Ս. Եփրեմի հայերէնի թարգմանուած ճառե-
րուն եւ ներբողներուն մէկ ընդարձակ ցուցակն ու
Զարբհանէլեան ունի (տես Մատենագր. հայկ. հին
թարգմ. էջ 455-466), բայց մենք այս ուսումնասի-
րութեան մէջ Նորայրի հետեւեցանք:

(2) Հմմտ. Տաշեան ցուցակ էջ 660

(3) Ոսկեդարու մեր առաջին թարգմանիչներէն
Արարհամ Զենակացի կամ խոստովանող եպիսկոպոսն
ալ զրի առած է «Պատմութիւն Արեւելեան վկայից»
խորագրով երկասիրութիւն մը, եւ հաւանաբար օգ-
տուած Մարութասի համանուն գործէն եւ հրատա-
րակուած Վենետիկ (տես Սոփերք հայկ. հատ. Դ.)
էջմիտման մատենադարանին ցուցակաց մէջ ալ կը
հանդիպինք (Թիւ գրչ. 930) սերանելոյն Արար-
համ խոստովանողին ասացեալ ի վկայսն արեւելից.
(հմմտ. հայկ. հին. զպր. էջ 270) Արարհամ խոստո-
վանողի մասին ընդարձակօրէն տեսնել եղիշէ էջ
350-363. Փարպէցի էջ 686:

(հմմտ. Հ. Յ. Գաթրճեան «Արքայան պատարագամատոյց հայոց» էջ 102):

Ս. Եփրեմի վերագրուած մատենագրական այս ցանկին մէջ, ինչպէս կը տեսնուի, կարեւոր տեղ մը կը բռնէ Հին Կտակարանի մեկնութիւնը, որուն հայերէն տակեզենիկ թարգմանութիւնը թէեւ Ս. դարուն կատարուած էր, սակայն Ասորերէն բնագիրը երկար ատեն անծանօթ մնաց Եւրոպայի Առաջին անգամ 861ին Անտիոքի վանականներէն Սեփերիոս իր խմբագրած «Catens Patrum in scripturam» անուն գործով Եփրեմի Հին Կտակարանի մեկնութենէն քանի մը մասեր ծանօթացուց բանասիրական աշխարհին. որմէ յետոյ այս մեկնութեան քանի մը կարեւոր մասերն ալ արժէքաւոր աշխատութեամբ մը ի լոյս ընծայուած են Վատիկանի կողմէ, եւ ուրիշ քանի մը մասերն ալ Մ. Լամի հրատարակած է իր ծանօթ գործովը՝ Այս մասնակի հրատարակութիւններուն ամէնքն ալ կազապարուած են Ասորական բնագրին վրայ, կ'ըսէ Պէշիթօ, որոնց մէջ հայկական թարգմանութիւնը ամէնէն ընտիր ու գերազանց աշխատութիւնը կը համարուի, որուն կը վկայեն այսօր Եւրոպացի շատ մը հմուտ եւ ձեռնհաս գիտնականներ, Եփրեմի այս զուլա գործոյը հայերէն թարգմանութեան մէջ Հին Կտակարանի ամբողջ գրքերուն մեկնութեամբ չէ որ կը ներկայանայ մեզի, այլ անոր կարեւոր մասերովը. թերեւս բուն բնագիրը ամբողջութեամբ եղած ըլլայ իսկ հայերէն թարգմանութեան պակասութիւններուն նկատմամբ որոշ կարծիք մը չենք կրնար յայտնել: Հ. Գ. Ջարբհանէլեան կը կարծէ թէ այս թերութիւնը ոչ թէ Հայոց վրայ կը ծանրանայ, այլ դարերու հոյովման մէջ Ասորի գաղափարողներուն վրայ: Եւ միանգամայն կարելի է ըսել թէ Գ. դարուն ապրող Ասորական Եկեղեցւոյ այս նշանաւոր Հայրը երբ մեկնեց Հին Կտակարանը, դեռ անոր ամբողջ մասերը կանոնական վաւերականութիւն մը չունէին, եւ բոլորքը ըրիստոնեայ Եկեղեցիներ, որոնք առկա չէին սիրոյ եւ համարաշխուքեան ոգւով կը զարգանային, հրապարակի վրայ տիրող

օրէնք մը չունէին Հին Կտակարանի այս կամ այն գրքին վաւերականութեան կամ անվաւերականութեան մասին. որովհետեւ մինչեւ Գ. դարուն վերջերը դեռ երեւան կուգային սուտ (pseudo) Կտակարաններ, ազանդաւորներու: Կողմէ յերկրուած, իբրեւ զէնք դործածելու համար Քրիստոնէից զէմ: Եփրեմի խմբագրութեամբ Ս. Գրոց ամբողջութիւնը, որուն տակեզարեան հայերէն թարգմանութիւնը այսօր մեր ձեռք կը գտնուի, երբ Ասորական բնագրին հետ բազմատեղ, հոն չառ մեծ տարբերութիւններ երեսն պիտի դան, քանի որ Ասորական Ս. Գրոց բնագրին (Պէշիթօյի) խմբագրութիւնը մինչեւ Եփրեմ որոշ զպրոցի մը աշխատութեան բուն վէճ չէր անցած (1): Ուստի Եփրեմ որ իր մեկնութեան համար իր զխաւոր բնագիր գործածած է Ասորական Պէշիթօն (հմմտ. Մատնգր. հայկ. հին թարգմ. էջ 74) ունէր ինչ ինչ պակաս մասեր. եւ հետեւաբար անոր վրայ կազապարուած գործ մը եղած է Եփրեմի այս աշխատասիրութիւնը:

Գ. ԳԱՊՊԷՆՃԵԱՆ

(1) Պէշիթօյի Թարգմանութեան ճիշդ Թուականին նկատմամբ անհամաձայն են Սէ' ազգային եւ Սէ' օտար բանասէրներ. ոմանք կը կարծեն Սէ' քրիստոսի տոնացին դարուն Եղեցիոյ մէջ Արքայներէն մէկուն իշխանութեան օրով Թարգմանուցաւ: Պէշիթօ կը նշանակէ պարզ կամ անպարզ:

«ԱՆԾԱՆՕԹԻՆ, ԱՍՏՈՒԾՈՅ»

Գերման հնախոյզ մը վերջիս Պերկամայի մէջ բազին մը երեւան հանած է, զոր Կապիտոն անունով քուրմ մը կանգնած է «Անծանօթ Աստուածներու» ի պատիւ: Ասիկայ նոր հաստատութիւն մըն է Դործք Առաքելոցի այն հաստատմին (Ժէ. 23), ուր Պօղոս կ'տկնարկէ այգպիսի բազիններու դոյութեան: Արձանագրութիւնը մասամբ աւրուած է, բայց գիտնականները սաղէս կը կարգան. — Theois agnostois Kapiton Dadouchos. Դժբախտաբար ճիշդ agnostois (Անծանօթ) բառին առաջին վանկը միայն կը կարգացուի, մնացեալն եղծուած է:

ԿԻԼԻԿԻՈՅ ՄԵԶ

ՀՈԳԵՒՈՐ ՆԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿ

Սրտի խորին յուզումով ստացանք Հայկական արժանաւոր քաջամեծերէն մէկուն ստորագրութեամբ հետեւեալ հակիրճ գրութիւնը, որ հրապարակուեալ տաճարապետի վիճակի մը կը մտնանայէ կիլիկիոյ մէջ: Ս. Կաթողիկոսին սրտածմելի կոչէն ետքը, որ անարձագանգ մնաց ցարդ, այս գրութիւնը աւելի գործնական արդիւնք յառաջ պիտի բերէ՝ արդեօք: Լ՞ո՞ւր պիտի կրնայ ընել քաջանայական Միութիւնը՝ առանց ժողովրդային տաք վերաբերումի մը եւ հնչուն օժանդակութեան:

Մարաշի Առաջն. Փօխ. Տ. Սահակ եւ Անտիոքոյ Կաթող. փօխ. Տ. Վաղարշակ քահանայք սրտածմելի կը նկարագրեն այդ քաղաքներու շրջակայից (գիւղերու) հոգեւոր եւ բարոյական վիճակը: Բաճանայէ զուրկ այդ գիւղերու կացութիւնը շատ վտանգաւոր է: Ասանկ ճշմարտութիւնն օրերուն լատին, Բողոքական, Գերման որսորդներու շահատակութիւնք օր քան զօր դառնաղինս կը յուսահատեցնեն տեղւոյն խեղճ ժողովուրդը: Կաթողիկոսարանը նիւթապէս եւ բարոյապէս անկարող է բան մը խորհելու, ճար մը գտնելու: Ս. Կաթողիկոսին կողմանէ գիւղերը զրկուած մի քանի քահանաներ, արդէն անճարակ, անօթութիւնն եւ թշուառութիւնն ալ առուել եւս անգործութեան, անկարողութեան դատապարտած են զիրենք: Անցեալ Դեկտեմբերին Հասան-Պէյլիի, Պաղէի եւն. կողմիցը գացի աչքովս տեսայ եւ լացի: Խեղճ Հայ Տէրաէրը տաքով Յէ ժամուան գիւղեր կ'այցելէ ճերմակ մօրուքովը: Մինչդեռ Լատին բաթերան, Բողոքական պատուելին նմայցներու վրայ քառասմբակ օրը 6-7 գիւղ կ'այցելէ լեցուն գրպանով: Արդ անհրաժեշտ է Բաճանայական Միութիւնը, եւ յետոյ առաքելութիւն մը Կիլիկիոյ մէջ: Բողոքին քահանաները պէտք է փոխնի փոխ գիւղերը իջնան, հովուեն:

ՅՐ. ԲՆՅ. ԵՍՍՅԵՍՆ

Հաղպ, 16 Օգոստոս

ՀԱՅ ԲԱՅԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ

Վերի սրտածմելի գրութենէն ետքը, հայ քաջանայութեան անկեալ վիճակին վերայ — նիւթապէս եւ, առաջ, բարոյապէս ալ, — գաւառի քաջանայի մը հետեւեալ տողերը՝ յուզիչ այժմեութիւն մը կուտան քաջամեծերու վիճակին բարեօրման ստիպողական հարցին: Կը հրատարակենք իր նամակը, թէն համալիր ջրլանք իր եզրակացութեան՝ քաջամեծերուն ամսածոշակ յատկացուելու մասին:

Հաճոյքով կարդացի Տաճարի 27րդ թիւով Հայ քաջանայութեան նիւթական եւ իմացական վիճակի բարեօրման մասին Պատ. ընթերցողաց ուղղեալ պարզաբանուած հարցումը, ինքնին այնքան կարեւոր ու կենսական, զոր պատեհ առիթ կը նկատեմ պարզելու դաւառի հայ քաջանայներու անտանելի վիճակը, եւ առորի դարման իմ խոնարհ աւսուլթիւնս: Պէտք է հստակ տեսնել թէ դաւառներուն մէջ, ընդհանուր առմամբ, քաջանայագործութիւնը նիւթականի տեսակէտով՝ մաւրացկանութեան մը երեւոյթը ստացած է: Գաւառի քաջանայութեան նիւթականը ապուհովուած է՝ իրարմէ աւելի կամ նուազ տարբեր միջոցներով, ժողովրդեան կամաւոր տուրքերով, որոնք իրաւունք անուանական բառով կ'սրակուին, բայց իրականին մէջ ողորմութիւն են պարզապէս: Դրամադաշտ դարու մը մէջ կ'ապրինք. ամէն դատակարարի մարդոց համար, օրէ օր քաղմապատկուող նիւթական պահանջներու գոհացման միջոց՝ միայն դրամը եղած է: Սոյն նիւթադաշտ դարուն մէջ, աշխարհառէր, հաճոյստէր անհատի մը ձեռքէն, հոգեւոր պաշտօնի մը փոխարէն՝ իրեն այնքան թանկագին նիւթականներ — դրամէն — մաս մը հանել, հոգին մարմինէ անջատել կը նշանակէ զրկիթ, զոր ենթական կամաւ ու զիւրաւ չէ որ պիտի թոյլատրէր: Ըշմարտութիւն է աս: Գաւառ ու դաւառակներու մէջ շատ տեղեր անձամբ ստուգած եմ թէ խեղճ քահանաներ, ստաւօտէ մինչեւ իրիկուն յուսահատ ու լքեալ կացութեան մը մէջ, անձկութեամբ կը սպասեն իրենց եկամու-

աի միակ աղբիւրն հանդիսացող մկրտութեան ու թաղման դէպքերուն : Բայց խնդրեմ, սիրելի ընթերցողներ, չպահաւորակներ թշուառ քահանաները, որոնք շատ անգամ 7-8 մեծ ու պզտիկ անդամներէ բաղկացեալ ընտանիքի տէրեր ըլլալով մեռնող կ'ուզեն ապրելու համար իրերու աս ցուալի կայութեան մէջ, քահանան ինչպէս պիտի կարենայ իր սուրբ կոչումին համապատասխան անթերի պաշտօնակատար մը ըլլալ, իր հօտին պահապան հըրեշտակը դառնալ, անկարելի է այդ :

Եթէ կ'ուզենք ճշմարտ, պարտաճանաչ քահանաներ ունենալ, եթէ կ'ուզենք Հայ Ս. Եկեղեցւոյ ծոցին մէջ, իր Ս. կոչումին առակ ու զիտակ քահանայութիւն մը ունենալ, իմ նստաստ կարծիքովս, առաջին ու զլրաւոր միջոցը պիտի ըլլայ քահանաներու նիւթակներ հատուտ հիփ մը վրայ դնել, այսինքն խաղաղ ջնջել իրաւունքի անուանական ձեւին տակ քահանաներուն պնակ ու գանձանակ պարտքները, եւ ասոնց տեղ հաստատել ամսաթիւները, որոնք իրենց, որով քահանան աղդին ոչ թէ նպաստընկալ մէկ աղքատիկ անհաւը, այլ Աստուծոյ տան ամսակահաւոր մէկ պաշտօնեան պիտի ըլլայ :

Հայ Եկեղեցիներուն մէջ եթէ այս զբոսովներ ընդունուի, թո՛ղ տրիշ բաղմաղան օգուաներ, այսու մասամբ բարւոքուած պիտի ըլլայ քահանայութեան իմացական վիճակն ալ :

Տաճար արդէն որոշ պաշտօն մը ստանձնած է՝ բարձրացնելու համար հայ քահանայութեան մտաւորական մակարդակը, պայմանաւ սակայն որ, Տաճարի բաժանարարութիւնը պարտաւորիչ ըլլայ ամէն քահանայի համար, որ կրնայ իր մոյրենի լեզուով բան մը կարդալ ու կարդացածը հասկնալ : Ան այս իւրաքանչիւր դաւաճի ու դաւաճակի Թագ. Խորհրդոյ անդամները կրնան իրենց քահանաներուն յատկացուցած տարեթիւսկէն Տաճար ժողովրդական շարաթաթիւրի տարեկան բաժնեկիւնը գեղջիկ եւ զանոնք բաժանորդագրել :

Անա՛ տոյն ատեն, հոգեւոր պաշտօնեայ քահանան՝ զերծ նիւթական ապրուստի մամուռքներէ՝ պիտի հոգայ եւ ուսումնասիրէ մտաւոր ապրուստի միջոցները. պիտի ունենայ քաջող մարմին ու քաջաթիւն միտք, պահել ու պահպանելու համար իրեն յանձնուած հոգեւոր հօռը :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԶ. ԿԵՎԶԷՐԵԱՆ

ՏԵԼԵՖ-ՄԱՏԵԼ

ԹԵՂԱՆԻՉ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՄՆՑԱԾ ՇԷՆՔԸ

Մեր կեանքերը՝ մինչ կ'ապրենք զանոնք օրէ օր՝ մեզի անկատար կ'երեւան միշտ. այո՛, շատ անկատար այն զարգացումէն՝ որուն պիտի ուզէինք հասնել զանոնք, եւ այս պատճառով յաճախ կը յուսահատինք Բայց Աստուծոյ համար, որ մեր կեանքի բոլոր շէնքին կը նայի եւ կը տեսնէ թէ մեր մասնակի ջանքերը այդ կեանքի շէնքին ամբողջութեան հետ կը ներդաշնակին օրէ օր, մեր կեանքը մեր ըմբռնածէն կամ երեւակայածէն շատ աւելի գեղեցիկ կ'երեւայ :

Մեծ քաղաքէ մը բաւական հեռու գտնուող մեծ քարահանքի մը գործաւորապետը ընաւ այցելած չէր այդ քաղաք, որուն շէնքերուն համար պէտք եղած բոլոր քարերը իր քարահանքէն կը տարուէին : Մարդը հոն շատ տարիներ աշխատած էր՝ նախ իրրեւ քարահատ հասարակ գործաւոր, յետոյ իրրեւ քարահանքին գործաւորապետը : Վերջապէս մարդը այնչափ ձանձրացաւ իր այս զբաղումէն, որ խորհեցաւ քաղաք երթալ եւ ուրիշ գործ մը գտնել : Քարահանքին տէրը չէր ուզեր իր այս հաւատարիմ ու գործունեայ գործաւորապետին ծառայութիւնէն զրկուիլ, այս պատճառով առաջարկեց անոր որ արձակուրդ մը առնէ ու ճամբորդութիւն մը ընէ փոփոխութեան համար : Գործաւորապետը վերջապէս ընդունեց իր տէրոջ այս առաջարկը :

Իր այս արձակուրդին առիթով գործաւորապետը այցելեց նաեւ այդ մեծ քաղաք, ուր իր տէրն ալ կը բնակէր : Քարահանքին տէրը իր գործաւորապետը պարտաւոր քաղաքին կարեւոր եւ ուշադրաւ վայրերը Օր մը, երբ գեղեցիկ հանրային շէնքի մը տուփ կը կենային, գործաւորապետը վարժ աչքով մը շէնքին նայելով ըսաւ.

— Այս շէնքին քարերը մեր քարահանքին քարերէն ըլլալ կ'երեւան :

— Այո՛, մեր քարէն է, պատասխանեց հոնքատէրը, այդ քարերը մեր հանքէն բերուեցան եւ դո՛ւք հսկեցիք այդ քարերուն կտրուելուն»:

Գործաւորապետը յուռ ու մունջ կեցաւ քարերուն դեղեցկութիւնը դիտելով, այդ յղկուն սիւները, զրաւանդները, սրբարաշ կամարաքարերը հիանալի էին պարզապէս:

— Քարերը երբ այսպիսի շէնքի մը մէջ իրենց տեղերը գործին շատ տարբեր կ'երևան, ըսաւ գործաւորապետը խոհուն կերպով մը, ու իրենց ճամբան շարունակեցին:

Ան յոյժ օրերուն, զորս անցուց քաղաքին մէջ գործաւորապետը, տեսաւ շատ մը դեղեցիկ շէնքեր որոնք շինուած էին իր հսկողութեան տակ կտրուած քարերէն, եւ այդ քարերուն կտրուելուն վրայ հըսկելէն էր որ յոգնած էր ինք:

Գործաւորապետը երբ նորէն իր գործին կը դառնար, հոնքատէրին ըսաւ.

— Կը յուսամ թէ ա՛յ հին տաղտուկը եւ յոգնութիւնը չպիտի զգամ, քանի որ տեսայ կոշտ կերպով կտրած քարերէն շինուած այս հիսնալի քարերը: Ասկէ ետքը ես չպիտի խորհիմ այն կոշտ կտորներուն վրայ, զորս կտրել կուտամ հոն, քարահանքին մէջ, այլ այս դեղեցիկ ու հոյաւ կապ շէնքերուն վրայ, որ շինուած են մեր կտրած ու կտրած քարերէն:

Այսպէսով մինք ալ կրնանք յուսալ թէ՛ այն կոշտ կտորները, զորս ամէն օր կը պատրաստենք մեր զործունէութեան քարահանքէն, պիտի ձեւաւորապէս աաշուին ու կոփուին շինելու համար մեր կեանքի դեղեցիկ ու հոյակապ շէնքը:

Մենք մեր ձուկատաղրին՝ քանդակագործն ենք. ամէն օր կը քանդակենք նկուրդի մը, որ մեր կա՛մ երջանկութեան կա՛մ գոթախոտութեան պատճառ պիտի ըլլայ: Ո՛րք պիտի ըլլայ, անո այս է կարեւոր հարցը: Չմոռնանք թէ մեզմէ ոչ ոք պիտի կրնայ իր ձեռագործը ուրանալ զատաստանի օրը: Մեր նկարագիրի ձեռագործը երկաթաքարէ շատ աւելի երկար, առ յաւէտ պիտի դիմանայ:

Թրգւմ. ԳՐԻԳՈՐԻՍ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ՄԵԾ ՄԻՏՔԵՐՈՒ

Դ.

ՆՐԻՏԱՍԱՐԳՈՒԹԻՒՆ,

Նրիտասարգութիւնը կեանքի ամեն փոքրիկ դէպքերու համար սիրալիր համակրութիւն մը ունենալ կը պարտի:

* * Տկար երիտասարդն այն է որ ուրախութիւնէ եւ հաճոյքէ կը յափշտակուի, ամեն բան իրմէ կը վտարէ, եւ զինքը կ'արգիլէ անձին տէր ըլլալ՝ եթէ մեծ փոքրամբ չունի սոյն հակումին զայրոյթը սահմանափակու, զսպելու:

* * Նրիտասարգներն իրենց յոյսերով զինովցած, կը կարծեն թէ յոյժ իրենց հետապնդած քաներուն պիտի հասնին: Իրենց ամէն երեւակայութիւններն իրականութիւններ կը թուին իրենց:

* * Նրիտասարգութիւնը շատ դեղեցիկ վայրկեան մըն է կեանքի մէջ: Տղայութեան միջոցին իրաց ծանօթութիւնն եւ բաւական զգայնութիւն չունին, ոչ մէկ բանով խորապէս տոգորուած: Հասուն տարիքի մէջ շատ կը պիտան, շատ չեն հակիր, սիրտը նուազ կը զրգուի եւ աւելի զգուշաւոր է. ո՛չ այնքան շատ կուտայ եւ ո՛չ այնքան շատ կ'ընդունի, սակայն քոտն եւ երեսուն տարիներուն մէջ ո՛րքան հիւթ, ինչքա՛ն լիութիւն:

* * Մենք ամեն իրերը կը տեսնենք մեր ունեցած տրամադրութեան համաձայն, այնպէս որ երիտասարգութիւնն որ ուրախութեան եւ հաճոյքի համար միայն կաղմաւած ըլլալ կը թուի, ցաւալի բան մը չի գտներ երբէ՛ք. ամեն ինչ իրեն կը ժպտի, ամեն ինչ իրեն կը ծափէ, բնաւ փորձառութիւն չունի աշխարհի չարութենէն եւ մեղ հասած ձախողանքէն. ասկէ՛ տաճկաւոր այն երեւակայութիւնն որ իրեն համար չիկայ երբէք յափառք եւ ձախողութիւն: Եւ որովհետեւ զինքն ուժեղ եւ կոյտովի կը զգայ, երկիւզն իրմէ կը վտարէ եւ ամեն կողմէ անապատները կը պարզէ, այն յուսով որ զինքը կ'ուռնցնէ եւ պիտի առաջնորդէ:

Քոխանակ խօսելու՝ մտիկ ընել զխանակ, ամփոփուիլ՝ փոխանակ տարածուիլ ուղեւում, լաւագոյն ձեռք մ'է զոր քիչ երիտասարդներ որդեգրելու սովորութիւնն առած են: Տեսարանին վրայ երեւցածնուն պէս, իրենք զիրենք խկապէս բան մը կը կարծեն, եւ զգաղզաբար սոյն յանձնապատան ինքնավստահութիւնն է որ արդեւ կ'ըլլայ իրենց ճշմարիտ արժէքին զգացման վրայ ամուր հիմ մը ստանալու, եւ օգտուելու այն ամեն բանէ զորս կրնային իւրացնել, ճոխանալու օգտաւէտ խորհուրդներով զորս փորձառութիւնն եւ անկէց առաջ եկած շահը իրենց պիտի հայթայթէին:

Պէտք է որ երիտասարդը մեծապէս հոգածու ըլլայ չպարփակուելու համակրութեանց փոքրիկ չըջանալի մը մէջ, որոնցմէ զուրս անհեթեթ ատելութիւններ եւ ապուշ նախապաշարունակներ միայն կը կարծէ ունենալ: Խնկացի եւ բարի մարդն ամեն միջոցներով պիտի ջանայ ինքն իրմէ դուրս ելլել, եւ հասկնալ քննել արժանիքներն այն անձերուն կամ ընկերութեանց որոնց գիտովին կը հակառակի իր նկարագրերը: Պէտք է դասել:

Խնթիւնն են որ կ'ըսեն թէ երիտասարդութեան տարիքը զուարճանալու համար եղած է: Երիտասարդ տարիքն անոր համար եղած է, որպէս զի բարի սովորութիւններ առնեն որոնք օգտակար պիտի ըլլան բոլոր իրենց կենաց մնացած մասին մէջ: Առ այս ամեն բանէ առաջ պէտք է մտածել որ երջանկութիւնն երբէք անհաշտելի չէ երիտասարդութեան լաւ կիրառման հետ, եւ ընդհակառակն այն երիտասարդներն որոնց կեանքը խառնուրդ մ'է վերջապէս զբաղմանց եւ սրբոյ հաճոյքի, աւելի վայելքներ ունին քան այն երիտասարդներն որ փճացած են զբոսանքներով: Պարզ կեանքն է, օգտակար զբաղումներն են որ մաքի հանգիստներ ճաշակել կուտան, միջոցներ մի միայն զուարճութիւններն ուրիշ բան չեն, բայց իթէ ձանձրոյթի յատակի վրայ կերտուած ասեղնազորութիւն մը, կ'ըսէ Յրանապիտանուսակ, ան Սէ:

Քաղեց՝ ԽԱՉԻՍԱՐ

ՊԱՄՓԻԼԻՈՍ ԵՒ ՅՈՒԼԻՈՍ

ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ

ԺԱՄԱՆԱԿՈՒԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ(1)

Է.

Տասը տարի անցաւ, որու միջոցին Յուլիոս ոչ իսկ անդամ մը հանդիպեցաւ իր բարեկամին, զոր հետեհեաւ մոռցաւ, ինչպէս նաեւ մոռցաւ անոր հետ ունեցած բանավէճերը: Բրիտանիաներու յիշատակն ալ բոլորովին անհետացաւ մտքէն: Յուլիոսի կեանքը սահեցաւ իր սովորական վատ ընթացքով: Հայրը մեռեր էր, եւ ինք ձեռք տներ էր անոր առեւտրական տան ղործերը որոնք խիստ կնճռոտ էին: Հարկադրուած էր զբաղիլ վաղեմի յաճախորդներով, Ա. իրիկէի մէջ գործող վաճառորդներով, յանձնակատարներով, վճարուելիք ու գանձուելիք զրամներով եւն: Յուլիոս, զրեթէ իր կամքին հակառակ, ինքզինքը առած էր իր գործերուն, որոնց կը սպասէր իր ամբողջ ժամանակը:

Միւս կողմէ իր կինը բազմաթիւ հոգեր կը պատճառէր իրեն: Եւ ասկէ զատ, պարտաւորուած էր կատարել հանրային պաշտօններ, որոնց ընդ ծանրացուցած էին ուսերուն վրայ: Այս նոր զբաղումները, թէեւ իր անձնասիրութիւնը կը փայփայէին, բայց շատ անհաճոյ էին իրեն: Այդ վայրկեանէն սկսեալ, իր անձնական գործերէն զատ, զբաղեցաւ Պետութեան ղործերով ալ: Օժտուած ըլլալով քիչ շատ ազանգով եւ խօսելու ղերութիւն ալ ունենալով, շուտով նշանաւոր եղաւ իր քաղաքացիներուն մէջ, այնպէս որ ապահով էր թէ օրին մէկը պիտի կրնայ իր ծննդավայրին մէջ քաղաքային ամենաբարձր պատիւներու արժանանալ:

Այդ տասը տարիներու միջոցին, իր բնականական կեանքի շրջանակին մէջ տեղի ունեցած էին փոփոխութիւններ, որոնք ղինքն հրապուրեալաւ բնոյթը չունէին բընաւ: Երեք ղաւակներու հայր եղած էր, որոնց ծնանգը պատճառ եղաւ որ ինքն աւելի հեռանայ անոնց մօրմէն: Նախ կի-

(1) Շար. 22րդ Թիւէն սկսեալ:

նը չատ բան կորսնցուցած էր իր գեղեցկութենէն եւ թարմութենէն : Անիկա, իր սէրն ու գորովը զաւակներուն յատկացած ըլլալով, առաջուան չափ հսկ չէր տաներ ամուսնոյն հաճոյանալու : Թէեւ տղաքները դայեակներու եւ կաթնատունքու խնամքին յանձնուած էին, երկրին սովորութեան համաձայն, բայց Յուլիոս յաճախ կը տեսնէր զանոնք իրենց մօրը յարկաբաժնին մէջ, կամ լաւ եւս ի զուր կիւնն իր յարկաբաժնին մէջ փնտռելէ ետքը, զայն կը դանդաղ տղոց սենեակին մէջ : Այնպէս սր զանոնք ծանր բեռ մը կը նշկատէր, աւելի՛ զժգոհանքի քան հաճոյքի ազդելը մը :

Անհատական եւ քաղաքային գործերով ծանրաբեռնուած ըլլալով, հարկադրուած էր թողուլ իր զուարճասէրի կեանքը : Կը մտածէր թէ իր ամենօրեայ ծանր աշխատութիւններէն ետքը, իրաւունք ունէր հանգիստի՝ կեանքի բոլոր հաճոյքներով հանդերձ, բայց այդ հաճոյքները չէր կրնար դանդաղ կնիջը մօտ, որ ինքզինքը բուրովին նուիրած էր Բրիտանիայ գերութիւն մը, եւ հրապուրուած՝ անոր քարոզած նոր վարդապետութիւններէն, այնպէս որ իր կեանքէն հեռու կը վանէր Յուլիոսի այնքան հաճելի երեւցող հիթանոսական պերճանքն եւ ունայնութիւնները : Ուստի Յուլիոս այդ կողմէ մերժուելով, կիսաշխարհիկ կնիջ մը հետ կապուեցաւ, անոր յատկացնելով իր բոլոր վայրկեանները :

Մարդ եթէ Յուլիոսի կեանքի այս շրջանին մէջ անոր հարցնէր թէ երջանիկ է, չպիտի կրնար որոշ պատասխան մը տալ : Այնքան ծանրաբեռնուած էր բազմակողմանի զրազումներով : Բոլորովին անձնատուր առեւտր, եւ քաղաքային գործերով, նաեւ հաճոյքներով եւ զրօսանքներով, երբէք չէր յաջողեր գոհացնելու իր բաղձանքներն եւ ձգտումները : Նոյն իսկ այնքան լաւ կը զգար այդ բոլոր յուզումներուն պարապութիւնն եւ ոչնչութիւնը, որ չէր բաղձար անոնց տեւականութեան : Երբ լուրջ գործի մը ձեռնարկէր, զայն վերջացնելու պահուն միայն հանգիստ

կ'ըլլար : Երբ հաճոյքի մը մէջ նետուէր, չնչին մանրամասնութեան մը պատճառ կ'ըլլար որ համ չզգայ այդ հաճոյքէն : Մէկ խօսքով ամէն կողմ կը նշմարէր յափրացումէն առաջ եկող պոգանքը :

Յուլիոս կեանքը այսպէս շտրունակեց, մինչեւ որ անակնկալ դէպք մը եկաւ յանկարծ փոխեց անոր ընթացքը : Օր մը, մինչ կը մասնակցէր Ոլիմպական մարտնակրթանքի խաղերուն, յաջողապէս իր կառքն առաջնորդելով դէպի նպատակակէտը, եւ իր ամբողջ կորովը դնելով ուրիշ կառքէ մը առաջ անցնելու ջանքին մէջ, յանկարծ այդ կառքին զարնուեցաւ : Իր կառքին անիւներէն մէկը խորտակուեցաւ, եւ իր ալ երկու կողակերերը եւ մէկ թեւը կտրուեցան : Վերքերը ծանր էին, բայց ոչ մահացու, որով երեք ամիս անկողին մնալ հարկադրուեցաւ :

Տառապանքի այդ երեք ամիսներուն միջոցին որ զինքը բռնի հանգիստի դատապարտեցին, շատ խորհրդածեց Յուլիոս : Միտքը, նիւթական մտահոգութիւններէ ազատուած, աւելի գործունէութիւն ցուցուց : Սկսաւ քննել իր ամբողջ անցեալ կեանքը, այն աստիճան չեզոքութեամբ որ կարծես թէ ուրիշի մը կեանքն եղած ըլլար : Այդ կեանքը շատ աննպաստ գոյնով մը ներկայացաւ իրեն, եւ այս ապաւորութեան սաստիկութիւնն աւելցաւ երեք դէպքերով որ մեծապէս տխրեցուցին զինքը : Այդ դէպքերու առաջինն էր ծեր գերիի մը փախուստը, որուն վրայ կատարեալ վրաստահութիւն ունէր, եւ սր երկար տարիներ հաւատարմօրէն ծառայած էր իր հօրը : Այդ գերին օրին մէկն անհետացաւ յանկարծ, միասին տանելով իւրմը մը թանկազին քարեր զորս Ափրիկէէն ստացած էր իր տիրոջը հաշուոյն : Այս կերպով Յուլիոս ահալին կորուստներու ենթարկուեցաւ որոնք անկանոնութիւն մտցուցին իր գործերուն մէջ : Յուլիոսի կրած երկրորդ դաւնութիւնն եղաւ իր սիրունիկ լքումը, որ իրմէ հեռացաւ, ուրիշի մը հետ ապրելու համար : Երկրորդ եւ ամենէն դժնդակ ձախողածն եղաւ իր մերջակցին ընտրութիւն այն բարձր պաշտօնին

որուն կը հետամտէր ինքը, եւ ինքզինքն ալ ընտրելի ներկայացուցած էր։ Ընտրութիւններն իր հիւանդութեան միջոցին կատարուեցան, եւ ինք յաղթուեցաւ։

Յուլիոս համոզուած էր որ այս բոլոր ճախողութեան իր հիւանդութենէն առաջ եկած են, եւ այդ ալ արդիւնք էր այն դժբախտ պարագային որ իր կողքը հինգ ասնդիմէզը աւելի ծռած էր դէպի ձախ։ Իր ցաւի անկողինն վրայ անդամաւորուած, մտածումները կը զառնային իր երջանկութեան դիւրտրեկութեան վրայ, յետոյ կը վերջուէր իր անցեալ դժբախտութիւնները, Քրիստոնէութիւնն ընդունելու վարանոտ տրամադրութիւնները, եւ վերջապէս Պամփիլիոսը զոր երկար ժամանակէ ի վեր չէր տեսած։ Կոտոր հետ ունեցած խօսակցութիւններն աւելի՛ ուժ կուտային այդ մտածումներուն։ Յորմէ հետէ Յուլիոս հիւանդ էր, կինը ժամանակին մեծագոյն մասը կ'անցընէր անոր մնարին մօտ, անոր պատմելով բոլոր ինչ որ իմացած էր իր գերուհիէն՝ Քրիստոնէութեան մասին։ Այս գերուհին ժամանակ մը ապրած էր Պամփիլիոսի գտնուած համայնքին մէջ, եւ շատ լաւ կը ճանչնար զայն։ Յուլիոս ուղեց տեսնել այս գերուհին, եւ հարցախորձեց զայն՝ Քրիստոնէաներու եւ մասնաւորապէս Պամփիլիոսի կեանքին բոլոր մանրամասնութիւններուն վրայ։

— Պամփիլիոս համայնքին ամենէն յարգուած անդամներն մէկն է, ըստ գերուհին։ Ամուսնացաւ Մատէնի հետ, այսինքն այն աղջկան զոր առաջ տարի առաջ անգամ մը տեսած էք իրեն հետ միասին, եւ հիմայ քանի մը գուռակներու տէր է։ Այո՛, եզրակացուց գերուհին, այն մարդիկն որ կը տարակուսին թէ Աստուած մարդն ստեղծած է երջանիկ ըլլալու համար, թա՛ղ երթան Պամփիլիոսն եւ Մատէնը տեսնեն իրենց զանուած համայնքին մէջ, եւ համոզուած կոտ պիտի դառնան։

Յուլիոս ճամբեց գերուհին, եւ մինակ մնաց՝ խորհրդածելով լսածներուն վրայ։ Նախանձը կը կրծէր սիրտը, երբ Պամ-

փիլիոսի կեանքը կը բաղդատէր իրենին հետ։ Որոշեց վանել այդ մտածումները, եւ ժամանակ անցընելու համար ձեռքն առաւ յունարէն ձեռագիր մը զոր կինն հոն թողուցեր էր սրպէս զի աչքէ անցընէ, եւ հետեւեալը կարդաց։

«Երկու ճամբայ կայ, մէկը դէպի կեանք կը տանի, միւսը մահուան կ'առաջնորդէ։

«Կեանքի ճամբուն հետեւելու համար պէտք է կատարել հետեւեալ պատուէրները։ — 1. Սիրէ քեզ ստեղծող Աստուածը։ 2. Սիրէ՛ ընկերդ քու անձիդ պէս, եւ մի՛ ընկեր ուրիշին ինչ որ չեսուզեր որ ուրիշները քեզի ընեն։

ԼԵՈՆ ԹՈԼՍՏՈՅ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆՑ խնդրոյն վրայ Ազգ. Վարչութիւնը պարտաւորուած է Սահմանադրութեան հաստատութենէն, այն է երեք տարիէ ի վեր Պատրիարքարանէն կառավարութեան մատուցուած թագրերնէրու մէկ ցուցակը։ Այդ թագրերներու վերջինն է ԴՆ. օր 'Իստական նախարարութեան մատուցուածը, որով կը ներկայացուին ցարդ պարզուած խնդիրները, որոնք ունէ լուծման չեն յանգած, եւ որոնց կարգադրութիւնը կը պահանջուի։ Այդ վերջին թագրերին մէջ ընդհ. աստիճանութեան խնդրէն դատ կան նաեւ Զարանճագի հոգային խնդրը եւ ուրիշ յարաբերական խնդիրներ, որոնց մասին հակառակ եղած դիմումներուն՝ ունէ արդիւնք յառաջ չէ եկած։

Բայց մինչ թագրերներ կը գրուին ու կը ցուցակագրուին միշտ, անդին, դաւառներու մէջ նորանոր թագրերներու նիւթեր կը պատրաստուին։ Հայ զինուորները գանգատներ ունին թէ կիրակի օրերը մարզանքի կը տարուին կամ լուացք ընել կը հարկադրուին, եւ ուրբա՛թ օրերը հանգիստ ընել կը տրուի իրենց, միւս

կողմէ կը տարուին ափսոսելի տեղեր ուր հոգեւոր մխիթարութիւնէ զուրկ կը մնան : Այս դանգաճան ունին Ռոմոսդոյի առաջնորդը, եւ մինչեւ իսկ . . . Մուսուլի հայ քահանան :

Իսկ սպանութիւնները շարունակելի են : Չէնկիլերէն կը գրեն թէ Միջագիւղցի Թագւոր գնդակահար կը սպաննուի, Տինկիւլ գիւղին Հայոց նորաշէն վարժարանը կրակի կը արուի անծանօթ հրճիգներու կողմէ, Ամասիոյ մէջ Ապտի օղլու իշխուած անուն բռնաւոր մը Օգոստ. 28ին գիշեր ատեն կը յարձակի նոր շինուելու վրայ եղող եկեղեցապատկան խանութի մը վրայ եւ կը փլցնէ զայն : Պէնլիի (Պրոստ) մերձաքնակ Տաղիստանցիներ կը յարձակին նոյն գիւղի Հայերու վրայ եւ կը թալլեն անոնց հունձքերը, ու իրենց անպատիժ մնալէն քաջալերուած՝ ամսոյս 23ին գիշերանց քչած տարած են այծերու հօտը՝ 170 հաս : Կաւաչի (Աղթումար) Տալմանց գիւղին վերեւը կը սպաննուին Յովհաննէս անուն ազգայինն եւ իր տամնամեայ զաւակը, նոյն գիւղի Հիւսէին աղայի թիւղարութեամբ, ոճրագործները չին խղճեր նոյն իսկ անոնց անկողինը գողնալու : Այս ոճիրը խիստ ճնշող ազդեցութիւն գործած է սարսափահար ժողովրդեան վրայ, որ կոտորածի սպանալիքին տակ կը գտնուի : Մշոյ կողմն ալ բացարձակ է անապահովութիւնը : Վերջին շաբթուան մէջ խեղդամահ եղած է Խոյթի Նատիր, եւ Գալըճոզցի եւ Խազիւղցի Քատո անուն երկու ճղգայիներ քուրդերու կողմէ վայրագօրէն սպաննուած են : Պապօտօնցի (Սլիվէն, Տիգրանակերտ) Կարպոյէ Հիպօ անուն Հայր Զուրխմած ատեն թունաւորուած է երեք Քուրդերու կողմէ, որոնք 20 տարիէ ի վեր զոհին քոյրն ալ առեւանգած են եղեր :

Այս բոլորը հետագրուած են Պատրիարքարան, աւելցուելով թէ ոճրագործները չեն ձերբակալուած : Եւ Պատրիարքարանը կը գրէ միշտ իր բողոքի թագրիւները, յուսալով միշտ որ օր մը ինչպիսի ի նկատ կ'առնուին :

* Խառն ժողովը Դշ. ի նիստին մէջ

եբաղեցաւ այս խնդիրներով, եւ որոշեց նոր դիմում մը ընել այսօր (Շբ.) կամ Բշ. օր, Վարչապետին եւ Ներքին գործոց նախարարին մօտ : Յանուն ժողովոյ, Տեղապահ Ս ին պիտի ընկերանայ Քաղաք. Ժողովոյ ատենապետ Դէորդ Էֆ. Աւանեսան :

ԿԻՕՆ. ԺՈՂՈՎԸ Դշ. օրը ի նկատ առնելով կարօտ եկեղեցականաց օգնութեան անուակի մը հաստատութեան խընդիրը, այդ մասին հրահանգի մը պատրաստութիւնը յանձնեց Տ. Տ. Սմբատ Գալաղեան, Դեւոնդ Դուրեան եւ Գրիգորիս Պալաքեան Մ. Վ. ներէն կազմուած յանձնաժողովի մը — Որոշեց Խառն ժողովոյ հաւանութեան ենթարկել ամուսնութեանց աթիւ երկուստեք բժշկական վկայագիր ներկայացնելու որոշումը — Նախաքննիչ յանձնաժողովոյ տեղեկագրին վրայ երեք ամուսնալուծութիւն վճարեց — Որոշեց Կեսարիոյ եւ Այր. Պոլսոյ առաջն. ընտրութեանց փութացումը յանձնարարել, եւ հաւաքակ պարագային՝ Խառն ժողովոյ հաւանութեամբ տեղապահներ կարգել — Մերժեց Տ. Վահրամ Վ. Նազարէթեանի հրաժարականը՝ Արաբկիրի Առաջնորդական տեղապահի ընտրելիութենէն :

Տեղապահութեան ընտրելի նշանակեց, Սամսոնի՝ Տ. Խոսրով Մ. Վ. Պէրիկեան, Շ. Գարահիսարի՝ Տ. Վահան Մ. Վ. Յակոբեան, եւ Խարբերդի՝ Տ. Գնէլ Մ. Վ. Գալէմբեարեան : — Սամսոնի նորակառոյց Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ համար Խաղիւղի որսանոցի սանուհիներէն Օր. Կատարինէ Քիւլանճեանի նկարած Ս. Աստուածածնի պատկերի օծումն արտօնեց եւ յանձնեց Տ. Գաբրիէլ Սրբազանի : — Որոշեց բացատրութեան կոչել Արմաշու միաբան Տ. Յովհաննէս Վ. Մալեանը, եւ անպայման կերպով քահանայադործութիւնէ դադրեցնել Գարթալի Տ. Կարապետ քհն. Օհանեանը՝ անհրաման երկու պսակ կատարած ըլլալուն համար — Որոշեց երեսուցէմ դրկել նոյն միաբանութենէն Տ. Անանիա Վ. Հաղարապետեանը՝ գաւառ պաշտօն վարելու տրամադրութիւն ցոյց չտալուն, եւ Արմաշ գտնուող Տ. Գրիգոր Վ. Յովհաննէսեանը՝ անհրաման Պոլիս ե-

կած ըլլալուն համար : — Որոշեց զրել Երուսաղէմի տեղապահին, որպէս զի Յովն. սարկ. Գարակէօզեանը Երուսաղէմ կոչէ :

ԿԱՐԵԻՈՐ ԿՏԱԿ ՄԸ. — Բարեկէն հասած լուրերէ գոհութեամբ կը տեղեկանանք թէ 1896ի դէպքերէն հաջորդեալ քաղաքը հառաւորութեամբ Մկրտիչ էֆ. Ինճէհան Պոլսոյ մէջ ունեցած 15,000 ռսկի կալուածները ազգին կտակած է, իր մահէն հետք անոնց հասոյթով ուսանողներ պահելու համար Եւրոպայի մէջ (բայց ոչ Բարիզ), միմիայն արհեստական կրթութիւն տալու պայմանով :

ԲԱՂԵՇԷՆ հասած լուրերէ կը հաուկցուի թէ առաջնորդ Տ. Սուրէն Ծ. Վ. Գալէմեան իրաւականաբար վանքին մէջ սեղան մը առեր է ի պատիւ ճաշիս եւ Նաճի պէյերու : Ներկայ գտնուելու եւ նաեւ կուտակալը, Մշոյ կառավարիչը, Մէքթուպէի պէյը, հայ եւ թուրք երեսելիներ, Թաւրիսի թղթակիցը եւ Իտալիոյ ժողովին անդամները, հրամանատարը, քաղաքապետը եւ հայ պաշտօնական անձնաւորութիւնը, Մասնատններու եկած նամակները գովեստով կը խօսին երիտասարդ Արմաշականին առաջնորդական գնահատելի գործունէութեան վրայ : Հազիւ թէ իր պաշտօնաւեգին հասած, դէմ առ դէմ գտնուեցաւ իր թիւք քսամեկի ռճիրին, որու համար Պատրիարքարան զրկած տեղեկագրերն եւ հեռագրերը չափանիշ մը կրնան նկատուիլ իր գործունէութեան : Հակառակ այդ եղերական պարագային մէջ ցուցուած արի ընթացքին, Տ. Սուրէն Ծ. Վ. կրցած է չափ սիրայիլ յարաբերութիւններ մշակել տեղային կառավարական բարձր պաշտօնէութեան հետ, ինչ որ վստահ ենք թէ պզտիկ նպաստ մը չէ իր ժողովուրդին օգուտին տեսակէտով : Միւս կողմէ կրցած է խորունկ ազդեցութիւն ձեռք բերել հայ ժողովուրդին վրայ, եւ յարգանք ներշնչել կրթական հարցին ջերմապէս հոգածու, միացուցիչ է զպրօցները, լաւ պլանով մը կազմել է, եւ Պոլսէն ուսուցիչներ հրաւիրել է : Միացուցիչ է նաեւ չորս վանքերը, ինչ որ շատ լաւ տպաւորութիւն թողացել է : Ասանք գահացուցիչ լուրեր են, որոնց ստուգութիւնը ապահովելէ հաջորդ, Ազգ. Վարչութիւնը վստահ ենք թէ պիտի քաջալերէ զինքը, աւելի՛ եռանդ եւ գործունէութիւն, աւելի՛ մեծ կորով ներշնչելու համար իրեն : Փափաքելի էր որ Հայ եկեղեցականութեան ամէնէն երիտասարդ, թարմ եւ գիտակից ուժերը, բոլորն ալ, սիրայօժար

նութիւն ինքզինքնին՝ դաւառացիին սրբաւորմոք ցաւերն ամփոքուէ :

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ ԴՆ. օր որոշեց թագրի մը ուղղել Բ. Դրան, եւ խնդրել որ յառաջիկայ ձմեռը չհասած պէտք եղած օգնութիւնները մատուցուին Սասունի գծախառ կարօտեալներուն : Ասկէ դատ հարկ դատելով ազգովին օգնութիւն մը ընձեռել անոնց, մասնաժողով մը կազմեց՝ անդամ կարգելով : — Տ. Յովն. Արքեպ. Արշարունի : Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալաքեան, եւ Պատրիկ Կիւլպչեկեան, Պետրոս Հալաճեան, Գառնիկ Սարգիսեան, Զարմայր Ճշմարտախօս, Մկրտիչ Մանուկեան, Մելքոն Կիւրճեան, Ներսէս Օհանեան, Սարգիս Գնահեան, Սահիան Թէլլիեան, եւ Տքթ. Վահրամ Թորոմեան էֆ.ները :

ԲԱՂԱՔ. ԺՈՂՈՎՈՅ երկու անգամեւրը հրաժարած ըլլալով, ԴՆ. օրը խառն ժողովին ներկայ ինք անդամները զիւանի ընտրութեան ձեռնարկեցին, եւ միաձայնութեամբ Ա. Ատենապետ ընտրեցին Դէորդ էֆ. Ասլանեանը, եւ Բ. Ատենապետ՝ Տիւրան էֆ. Երկանեանը :

ԱՂՋԿԱՆՑ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ. — Կրօն. ժողովը նախորդ նիստին որոշած էր 40 տարեկանէն վար ազգական՝ ամուսնական խնդրոց մէջ վկայութիւն տալը արգելել : Խառն ժողովոյ աշխարհական անդամք ԴՆ. օր բացառութիւն ուղեցին, եւ Կրօն. ժողովին կողմէ Տ. Գրիգորիս Վ. պատասխանեց թէ այդ տիտակ խնդրոց մէջ ազգական վկայութիւն տալը անպատշաճ նշկատուած է, քանի որ կրնայ անոնց բարոյականը խանգարել : Աշխարհական անդամք անգլեցին թէ ամէն անոնք որ չափաւս եւ իրենց ըրածին գիտակից կը նկատուին, ըստ դատաւարական օրինաց իրաւունք ունին վկայութիւն տալու : Վիճաբանութիւնը երկար տեւեցին, եւ կարելի չեղաւ եզրակացութեան մը յանդիլ :

Արտօնատէր ՀՄՍՅԱՆ ԲՆՆ. ԷԲՍԷՐՃԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐԲԱՅՐ ԲՆՆ. ԿԵԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՃԵԱՆ

ՄՍՍՑՈՒՄԻ ԳԻՐԲԵՐ

ՄՍՆԶԷՄԻԸՐԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ . —

Գրեց Մուշեղ Եսիսկոպոս . — Պոստինի Ազգ թերթին մէջ թերթօնի ձեւով հրատարակուելէ ետքը, ատանձին հատորով ալ հրատարակելու է այս կարեւոր գործը, որ նոյն պատուական դաշութին չանկան պատմութենէն զատ, կը պարունակէ մանաւանդ հետաքրքրական տեղեկութիւններ հայկաճառ խնդրոյն նկատմամբ, ձեռագիր օրինակը Ներսէս Վարժապետեանի անտիպ նամակներուն, նաեւ պատկերները Մանչէսթըրի Հայոց հոգեւոր հովիւներուն, Մանչէսթըրի Եկեղեցիին, եւն. Շատ կարեւոր եւ ընթերցանութեան արժանի հատոր մը : Գին 50 սէնդ : Դիմել Լ. Օսպաշեան, The foreign dook-stare 795 Washington st. room 2, Boston Mass :

ԸՆԴՀ. ԱԶԳԱՅ ՊԱՏՄՈՔԻՒՆ . —

Ա. Հին ազգեր . — Գրեց Դաւիթ Խաչկոնց . — Ա. հատորը ընդհ. ազգաց պատմութեան դասընթացքի մը, խնամով պատրաստուած : Այս Ա. մասին մէջ կը խօսուի արեւելեան հին Ազգերու վրայ Գործը զարգարուած է քարտէսներով, պատկերներով եւն. , եւ հրատարակուած է Զարդարեան գրատան կողմէ : Գին 5 դր. :

ԱՆՆԱ ՔԱՐԷՆԻՆԱ, Լեռն Թոշարոյի Թարգմանեց Եր. Օսեան : Այլաբահանակ հեղինակին լաւագոյն գործերէն մէկը, հրատարակուած Պաշենց գրասան կողմէ : Երկու հատոր, գին 15 դր. :

Մ. ԹԱԳԻՈՐ ՊԱԼՃԵԱՆ

ՓՍԿԵՂԱԳՈՐԾ

Երկար ժամանակէ ի վեր ծանօթ է իր ճարտարութեամբ : Կը շինէ եւ կը պատրաստէ գեղեցիկ սաղաւարտներ, եւ մանաւանդ փակեղներ՝ ընտիր թուրքի, ասուի, սաթէն ու լիօնի եւն. վրայ : Դիմել գոհացուցիչ :

Դիմել Ղալաթիա, Ս. Լուսաւորիչ Եկեղեցի, ուր կը գտնուի միշտ :

5—1

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԲՆԱՐ ԵՐԳԱՌԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵԼԵՑԻՈՑ

Պատասխան

ԿՐՕՆԻԴԵՍ ՔԶՆՑ. ՆԱԼԱՆԴԵԱՆ

Կարեւոր պակաս մը կը լեցնէ եկեղեցւոյ երաժիշտ մանուկներու համար, որոնք ասոր գործածութեամբ ալ պէտք չպիտի ունենան ժամագրքի, տաղարանի, շարականի, փոխասացի եւ այլ յարակից տեսակներու եւ գիրքերու : Տէր եւ հրատարակիչ Ադեֆսանդր Եօգիասեան : Տպ. Մարգուան, «Կիւթնպէրկ» տպարան, 1911 : Գին 7 դր. (մէճիտ 1911) : Բօսդի ծախք 30 փրյ. :

3—2

ԳԻՆ 1 ՂՐՇՈՒ

Ցպագր. Ց. ՏՕՂԱՐԱՄԱՆԱՆ

Սուրբան-Համար Մօլա-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՈ